

ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բաշխական թվականն արտահայտում է առարկաների բաշխումը որոշ թվային քանակով: Քիչ լեզուներ կան, որոնք բաշխական թվականի համար ունեն առանձին դրսևորումներ: Հր. Աճառյանը ներկայացնում է աշխարհի լեզուների բաշխական թվականի կազմության եղանակները, որոնցից երկուսն է, որ լեզուների մի մասը բաշխականը կազմում է բացարձակ թվականի կրկնությամբ, դարձվածների կամ նախդիրների օգնությամբ, որոշ լեզուներ էլ բաշխականի քերականական իմաստն արտահայտում են յուրահատուկ ածանցով¹:

Հայերենի բարբառներում կարելի է առանձնացնել բաշխականի արտահայտության հետևյալ միջոցները.

1. բացարձակ թվականի կրկնությամբ, օրինակ՝ *մարթա էրկու - էրկու մատիտ* (Ղափան - № 65), *ըրգու-ըրգու նըստըմօն իմ* (Բեյլան, Սովուխ - № 459), *ամէկու խեղ չուօրս-չուօրս գիւլբա դըրեց* (Ալաշկերտ, Կազի - № 108)²:

2. -Ական վերջածանցով, օրինակ՝ *էրգուազան խընծօր* (Երզնկա), *իրէկկօն մատիտ* (Համշեն), *հինգական մատիտ* (Ղարաբաղ):

3. Բացարձակ թվականով՝ նկարագրական եղանակ. պետք է նաև նշել, որ բացարձակ թվականով արտահայտման եղանակով կազմություններն ուղեկցվում են որոշյալ դերանուններով՝ *ամեն մեկին, ամենքին, բոլորին, յուրաքանչյուրին*, իհարկե, բարբառային արտահայտություններով: *Այսպես՝ ամման մընին չուրս տունծ* (Փառակա - №13), *հար մէծին էրկու խունծեր* (Նախիջևան, Ազա - № 14), *լօխին էլ էրկու խընծօր* (Ղարաբաղ, Շարուկ-քար, Ջազլիկ - № 32), *չըմընուն իրէկ խաղ մադիտ* (Խնուս, Գոպալ - № 45):

Հայերենի բոլոր բարբառներում գործածական է բաշխականի՝ բացարձակ թվականի կրկնությամբ կազմությունը, իսկ -ական վերջածանցով ձևերը համեմատաբար քիչ կիրառություն ունեն: Կան բարբառներ, որոնց բնորոշ է միայն մեկ կազմություն, որոշ բարբառներում էլ գործածական են երկու կամ երեք կազմությունները միասին:

Աճառյանը գրում է, որ բարբառների մեջ կրկնական ձևն ընդունված է միմյն տասը թվականը, իսկ -ական թվականակերտ ածանցը ընդհանուր է բոլորին³: Սակայն բարբառներում հանդիպում ենք նաև *տըսվէրկու-տըսվէրկու* (Սուշ,

¹ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, Եր., 1952, էջ 295-299:

² Օրինակները բերված են Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված ենթախոսվածքներից: Վերջինները նշել ենք տեղանվամբ և տեսքի համարով:

³ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, էջ 300:

Եկմալ գյուղ - №111), տըսվէրգու-տըսվէրգու, տըսնուխինգ-տըսնուխինգ (Ալաշկերտ, Կազի գյուղ- №108, Սուշ, Եկմալ գյուղ- №111), տասնըյոտ-տասնըյոտ (Մարտունի, Թագագյուղ - № 128), ըրտուն - ըրտուն (Մարտակերտ, Առաջածոր գյուղ- № 245), շենտուն-շենտուն (Կարս, Ուզունքիլիսա գյուղ- № 265), յենտուն-յենտուն//յենտուն-յենտուն (Սուշ-Ալաշկերտ - №36), օխտանասուն-օխտանասուն, հարուր - հարուր (Կարս, Փալղովան գյուղ- № 29^ա), հարուր - հարուր, հազար-հազար (Նախիջևան, Ազնաբերդ գյուղ - № 25) քվերի բաշխականի կրկնավոր ձևերը: *Քսան* քվականի կրկնավոր բաշխական ունեն գրեթե բոլոր բարբառները: Բացարձակ քվականի կրկնությամբ բաշխականի կազմության մեջ, ի տարբերություն արդի հայերենի, բարբառներում 1-10 քվերը ենթարկվում են որոշակի հնչյունափոխությունների, օրինակ՝ *մէյ-մէգ, մէյ-մէյ, էրգ - էրգու, ըրք - իրէք, չօշ-չօշ, խիյ-խինգ, օխտա-օխտա, ըխտը-օխտը, քսան-սան*, որոնց կանդրադառնանք առաջիկայում:

Բաշխականի -ական ածանցը բարբառներում ենթարկվում է օրինաչափ հնչյունափոխությունների:

Համշենի բարբառում բաշխականը կազմվում է բացարձակ քվականի կրկնությամբ և *ագօն, կօն* ածանցներով. ըստ որում Համշենի բարբառում *մ* և *ն* ձայնորդներից առաջ *ա* ձայնավորը փոխվում է *օ*-ի, այդ պատճառով -ական վերջաձանցը հնչվում է *ագօն, կօն*⁴:

Համշենի Սամսոն գավառի խոսվածքներում բաշխականը կազմվում է *ագօն* և *կօն* վերջաձանցներով՝ *էրգու(ս)ագօն, իրէկագօն, չէյսագօն, հինկկօն, վիժկօն, յօտկօն, ուտկօն, դասագօն, սօնագօն* (№187):

Ինչպես երևում է, *երկու, երեք, չորս, տասը* և *քսան* քվականների բաշխականները կազմվել են *ագօն* ածանցով, իսկ մյուսները՝ *կօն* ածանցով: Տասը>*դասը* քվականի *ը*-ն ական-ից առաջ սղվել է:

Երկու քվականի բաշխականը կազմվել է կամ *էրգու*, կամ *էրգուս* հիմքով: Կերքինս գրաբարյան *երկուք* քվականի անորոշ հայցականի ձևն է՝ *երկոււմ*⁵:

Քսան քվականի բաշխականը կազմվել է *սօն* հիմքով. տեղի է ունեցել *ք*-ի անկում՝ *սօնագօն*⁶: Իսկ Սամսոնի Օրմոնքոյ գյուղի խոսվածքում *յոթ* և *տասը* քվերը բաշխականի կազմության մեջ պահպանել են գրաբարյան *եւթն (եօթն)* և *տասն* քվականների արմատական *ն*-ն՝ *օխտնագօն, դասնագօն* (№410):

Համշենի բարբառը կրող Ծեբելդա գյուղում (Աբխազիա, Գագրայի շրջան) միևնույն քվականի բաշխականը կազմվել է և *ագօն*, և *կօն* ածանցներով՝ *էրգուսկօն//էրգուագօն//էրգուսագօն, իրէկկօն//իրէկագօն, չէյսկօն//չէյսագօն*,

⁴ Զր. Աճառյան, Զննություն Համշենի բարբառի, Եր., 1947, էջ 22:

⁵ Զ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 148:

⁶ Զր. Աճառյան, Զննություն Համշենի բարբառի, Եր., 1947, էջ 68:

հինգվոն//հինգագոն, վեժվոն//վեժագոն, յօտվոն//յօտագոն, ուտվոն//ուտագոն, դասվոն//դաս(ն)ագոն: Քսան թվականը ստացել է միայն -ագոն վերջածանցը՝ սօնագոն (№336): Նույն ածանցներով են բաշխականը կազմում նաև Տրապիզոնի և Օրդուի միջբարբառները (№ 52, 94, 99, 99⁹):

Առտեալի բարբառում (Լեհաստան և Սուչավա) ևս բաշխականը կազմվում է ական>ագան ածանցով, որը կամ պահպանվել է ամբողջությամբ, կամ սղվել է առաջին ա ծայնավորը, կամ գ-ի անկումով մնացել է անմասնիկը.

Աչ. էրգուսզան, Լհ. էրգուսզան Աչ. դասնըվինագան, դասնըինագան

Աչ. իրեքան, Լհ. իրեզան Լհ. քսանագան

Աչ. դասնըմեզագան, Լհ. դասնըմեկզան Աչ. խունական

Աչ. դասվէրգուսզան Լհ. հարուրագան

Աչ. դասֆիրեքան Լհ. հազարզան⁷

Սուչավայի խոսվածքում էրգու թվականի բաշխականում -ագան ածանցի գ-ն չի հնչյունափոխվել՝ էրգուսզան, իսկ Լեհաստանի խոսվածքում տեղի է ունեցել ծայնեղ գ-ի թույլ շնչեղացում՝ էրգուսզան: Լեհաստանի խոսվածքում իրեք թվականի ք-ն ընկել է, և վերջածանցի գ-ն երկու ծայնավորների միջև փոխվել է թույլ շնչեղ գ-ի⁸: Սակայն տասներեք թվականի բաշխականը կազմվել է միայն ան մասնիկով՝ դասֆիրեքան: Ինքը մնացել է անհնչյունափոխ: Դասնըմեկզան ձևում հաջորդ գ-ի ազդեցությամբ մեկ>մեզ թվականի ծայնեղ բաղաձայն գ-ն խլացել է՝ է:

Աճառյանը գ-ի վերը նշված հնչյունափոխությունը համարում է շնչեղացում՝ գ⁹, սակայն այստեղ դիտվում է թույլ շնչեղացում՝ գ⁷:

Մինչ այս քննված խոսվածքների -ական ածանցի մեջ տեղի էր ունեցել տարբեր հնչյունների սղում: Իսկ ներքևում քննվող խոսվածքներում -ական վերջածանցը, ինչպես կոտեսներ, պահպանվել է ամբողջությամբ:

Արևմտյան խմբակցության Երզնկայի, Ակնի բարբառներում և Շապին-Կարահիսարի միջբարբառում բաշխականը կազմվում է ական>ագան ածանցով՝ մեզագան (Երզնկա), մեզագան (Ակն, Շ.-Գ.), էրգուագան (Ակն, Շ.-Գ.), էրգուքագան (Երզնկա), իրեքագան, չօրսագան, վեցագան, օխտագան//յօթագան, ութագան, իննագան, տասագան (Երզնկա), տասնագան (Ակն), տասագան (Շ.-Գ.), քրսանագան (№ 5, 6, 3):

Երզնկայի բարբառում երկու թվականի բաշխականը կազմվել է գրաբարածն էրգուք հիմքով՝ էրգուքագան, իսկ Ակնում և Շապին-Կարահիսարում՝

⁷ Դր. Աճառյան, Զննություն Առտեալի բարբառի, 1963, էջ 152:

⁸ Նույն տեղում, էջ 60:

⁹ Նույն տեղում, էջ 152:

երգու հիմքով: Երգնկայի բարբառում տասը թվականը հանդես է եկել կրկնակ սով, Ակնում ըն փոխվել է Գ-ի, իսկ Շապին-Կարահիսարի միջբարբառում ըն սովել է: Տիգրանակերտի բարբառում -ական ածանցով բաշխականի կազմությունը սակավ գործածություն ունի: -Ական վերջածանցը հանդես է գալիս քմային ա-երով՝ *երգուքնագան, դասնագան* (№ 2): Ինչպես երևում է, երկու թվականի բաշխականը ևս կազմվել է *երգուք* հիմքով, ինչպես Երգնկայի բարբառում, իսկ *-ագան*-ից առաջ տեղի է ունեցել *ն* հոդի հավելում:

Յուրօրինակ դրսևորում ունի Արաբկիրի բարբառի բաշխականը՝ *երգ-երգագան, չօրս-չօրսագան, տաս-տասագան*: Այն կրկնավոր բարդություն է, որի առաջին եզրում բացարձակ թվականներ են. դրանք կրկնվում են՝ իբրև արմատ միանալով բաշխականի -ական ածանցին: Բաղադրության երկու եզրերում ընկել է *երգու* թվականի վերջահանգ *ու*-ն: Փաստորեն, այս կառույցը բաշխականի կազմության երկու ձևերի համադրության արդյունք է՝ բացարձակ թվականի կրկնությամբ և ական>*ագան* ածանցով (№ 132): Բաշխականի նման կազմության մասին գրում է նաև Յր. Աճառյանը իր «Լիակատար»-ում՝ համարելով այն որպես ժողովրդական ձև. «Ժողովրդական ձևով կա նաև երկուսի խառնուրդը. ինչպես՝ *մեկ-մեկական, երկ-երկուքական, երեք-երեքական, չորս-չորսական* և այլն, բայց գրական լեզվի մեջ խորթ և ավելորդ է համարվում այդ երկուսի միացումը»¹⁰:

Վանի և Շատախի բարբառներում (№ 7, 17) -ական ածանցը քիչ է կիրառվում: Աճառյանը նշում է, որ -ական-ով բաշխականները Վանի բարբառում «սովորական չեն. ավելի լավ են համարվում կրկնական ձևերը»¹¹:

Վան	Շատախ
<i>երկուական</i>	<i>երկուական</i>
<i>իրեքական</i>	<i>իրեքական</i>

Ընդհանրապես, Վասպուրականի ենթախոսվածքներում տարբերում են երեք տեսակի ա ծայնավոր՝ սովորական *ա*, քմային՝ *ա՛*, շրթնայնացած՝ *ա՛՛*: Շատախի բարբառում գործառում է շրթնայնացած *ա՛՛*: Ըստ Աճառյանի՝ այս «ա-ն արտասանվում է (հատկապես շեշտի տակ) փակ ձևով, անգլիական *ă* ծայնի նման, բայց նրանից մի քիչ բաց. — հյ. ա և օ ծայնավորների միջին աստիճանն է»¹²:

Սոկսի Մամուտանց գյուղի խոսվածքում -ական-ի առաջին *ա*-ն քմայնացած է, իսկ երկրորդ *ա*-ն՝ շրթնայնացած՝ *երկըվակա՛ն, իրիքակա՛ն, չորսակա՛ն*,

¹⁰ Յր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 1, Եր., 1952, էջ 300:

¹¹ Յր. Աճառյան, Զննություն Վանի բարբառի, 1953, էջ 148:

¹² Յր. Աճառյան, Զննություն Վանի բարբառի, 1953, էջ 14:

խիճական, օւրական//աւրական, տասական. Վեց, յոթ և քսան թվականների բաշխականների կազմության մեջ վերջին վանկի փ-ի ազդեցությամբ նախորդ վանկի ա-ն ենթարկվել է առնմանության՝ *վիցփկփն, յոթական, քսփնփկփն. էրկու* թվականի ու-ն քմային *ա* ծայնավորից առաջ փոխվել է *վ-ի*:

Սերաստիայի խուռնավուլ գյուղի խոսվածքում *օխդն* և *տասն* թվականները -ական ածանցից առաջ վերականգնել են արմատական *ն* հնչյունը՝ *օխդնական, տասնական*, իսկ ութ թվականի բաշխականը կազմվել է նախորդ *օխդնական-ի* համաբանությամբ՝ *ութնական* -ական-ից առաջ *ն-ի* հավելումով (№ 294):

Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Ջազիզ (№ 225), Քոլատակ, Թըմըղլու, Գառնուքար (№ 249), Տոնաշեն, Գետի գոմեր, Սողոմոնագոմեր, Դաստակերտ (№ 250) գյուղերի և Ախալքալաքի շրջանի Ղաբուռ (№ 75), Աբուլ (№ 346), Բեժանո (№ 390) գյուղերի խոսվածքներում բաշխականի -ական ածանցը մնում է անփոփոխ: Փոփոխությունները տեղի են ունենում բառարմատներում:

Ղարաբաղ՝ ըրկուական, իրէքական//իրիէքական//իրըքական, չորսական, հինգական, վիցական//վիցական, օխտական//ուխտական, ութական//օթական, իննական, տասական// տըսական, քըսընական:

Ախալքալաք՝ էրկուական, իրէքական//իրիէքական, չորսական//չուորսական, հինկական// հընկական, վեցական//վիեցական, յօթական//օխտական, ութական, տասական//տամական, քըսանական:

Այսպես՝ Մարտակերտի շրջանի խոսվածքներում *էրկու* թվականի է-ն, շեշտից զրկվելով, փոխվում է *ը-ի*: *Իրէք* թվականի է-ն -ական-ից առաջ կամ մնում է նույնը, կամ տեղի են ունենում է>ի, է>ը հնչյունափոխությունները: *Վեց* թվականը հանդես է գալիս կամ մեկ, կամ կրկնակ ց-ով, իսկ է-ն դառնում է *ի*¹³: *Ինը* թվականի բաշխականում ածանցի առաջին *ա-ն* *ն* ծայնորդի ազդեցությամբ քմայնանում է՝ *ա*: *Տասը* թվականի *ա-ն* կամ պահպանվում է, կամ դառնում *ը*¹⁴, իսկ *քըսան* թվականի *ա-ն* ընկնում է¹⁵:

Ախալքալաքի շրջանի խոսվածքներում *հինկ* թվականի *ի-ն* -ական-ից առաջ կամ պահպանվում է, կամ վերածվում է *ը-ի*¹⁶: Իսկ *տասը* թվականը դրսևորվում է հիմքի երկու տարբերակով՝ *տաս* և *տամը*:

¹³ Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, 1966, էջ 32:

¹⁴ Նույն տեղում, էջ 23-24:

¹⁵ Նույն տեղում, էջ 25:

¹⁶ Զ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Եր., 1952, էջ 16:

Կարնո բարբառում բոլոր դիրքերում խուլ պայթական *կ*-ն ծայնեղանում է՝ *q*¹⁷: Ըստ այդմ, բաշխականը կազմվում է *-ազան* հնչյունական տարբերակով՝ *մեգազան, էրգուազան, չորսազան, վեգազան*¹⁸:

Բարբառներում շատ տարածված է հատ միավորի հարադրությամբ բաշխականի կազմությունը:

Յատ>*հաղ* միավորով հարադրությունը հատկապես տարածված է Սասունի բարբառում՝ *էրգու - էրգուք հաղ, իրեկ - իրեկ հաղ, չորս - չորս հաղ*:

Սասուն գավառի Արփի գյուղում, իբրև անվանական լրացում, գործածվում է հատ>*հաղ* միավորը, իսկ իբրև բայական լրացում՝ բացարձակ թվականի կրկնությամբ բաշխականին կարող է հարադրվել *հոգով>հոկով* գործիականով բառածնը (№ 10).

էրգու - էրգու հաղ խընծօր իրեկ - իրեկ հոկով գայնիլ
իրեկ - իրեկ հաղ մադիտ էրգու - էրգու հոկով նըստիլ

Բեյլանի բարբառում տեղի է ունեցել ա>օ հնչյունափոխություն՝ *հօղ ըրգը-ըրգու հօղ, իրիք-իրիք հօղ, չուրս-չուրս հօղ* (Սովոլուխ գյուղ - № 459):

Ձեթունի Ֆուռնոս (Ուլնիա) գյուղաքաղաքի խոսվածքում հատ-ի դիմաց գրանցված են հետևյալ ձևերը՝ *հօղ, հող՝ ի/ըրգը-ի/ըրգու հօղ, իրիք - իրիք հող,*

չուրս - չուրս հող (№ 295): Տիգրանակերտի բարբառում բացարձակ թվականի հետ հատ>*հաղ* միավորը միաժամանակ կարող է կրկնվել՝ *էրգու հաղ- էրգու հաղ, իրեք հաղ - իրեք հաղ, չուրս հաղ - չուրս հաղ* (№ 2): Վանի բարբառում ևս

հիմնականում տարածված է հատ>*խատ* բառի հարադրությամբ բաշխական թվականի կազմությունը՝ *մէյ-մէյ խատ, էրկու - էրկու խատ, իրեք - իրեք խատ,*

չորս - չորս խատ, կըսան - կըսան խատ (№ 7, 257, 258, 265, 309, 334): Վանի բարբառում բառասկզբի *հ*-ն միշտ դառնում է *խ*¹⁹: Վրաստանի որոշ շրջանների գյուղերի խոսվածքներում հատ միավորը դրսևորվում է կամ նույնությամբ՝ *էրկու-էրկու հատ* (Ախալքալաքի շրջան, Աբուլ գյուղ- № 346 - էրգուումի նահանգ, Ունուդում գյուղ), կամ հատ>*հաղ* հնչյունափոխությամբ²⁰. *իրեք - իրեք հաղ* (Բոգդանովկայի շրջան, Դիլիֆ գյուղ- № 183 - Մուշի գաղթականություն), կամ *հ*-ի անկումով՝ *չորս ատ-չորս ատ* (Ախալքալաքի շրջան, Օլավերդ գյուղ- № 120 - Կարինի շրջան, Երկար Սասուր գյուղ):

Բացի վերը նշված բաշխական թվականի դրսևորումներից բարբառներում կան նաև այլ կազմություններ՝ *ըրգը-ըրգը մըգ* (Սվեդիա), *իրեքան, էրկու հատան*

¹⁷ Նույն տեղում, էջ 28:

¹⁸ Նույն տեղում, էջ 57:

¹⁹ Գր. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Եր., 1953, էջ 64:

²⁰ Ս. Բաղդասարյան, Սշո բարբառը, Եր., 1958, էջ 56:

(Ղարաբաղ), *էրզու-էրզու հադ* (Մուշ), *էրզուշար-էրզուշար հադ* (Եդեսիա),
էրկըսով (Փերիա), *էրկու տեղով* (Սասուն), *հինգ - հինգով* (Ոռոդսթոն):

Ավեդիայի բարբառում բաշխականներն արտահայտվում են բացարձակ քանակականի կրկնությամբ և *մըզ* (մեկ) մասնիկի հարադրումով՝ *ըրզը-ըրզը մըզ, ըրկ-ըրկ մըզ, չուկ-չուկ մըզ, հանգ-հանգ մըզ, վիծ-վիծ մըզ, յուտ-յուտը մըզ,*

*դուս-դուսը մըզ, քըսուն-քըսուն մըզ*²¹: *Մըզ* մասնիկը համապատասխանում է հատ միավորին: Տ. Անդրեասյանը գրում է. «Հավանաբար արաբերենի ազդեցությունն է այդ ձևը, ուր նմանապես կըսվի՝ «խանստ վահիդ» (5 մեկ), «աշրա վահիդ (10 մեկ), «միթ վահիդ» (100 մեկ), «էլֆ վահիդ» (1000 մեկ) և այլն»²²:

Կարելի է ենթադրել, որ *մեկ>մըզ* միավորը կարող էր առաջացած լինել «ամեն մեկին» (յուրաքանչյուրին) արտահայտության կրճատումից:

Խարբերդի Հաբուսի գյուղի խոսվածքում ևս հանդիպում ենք *մեկ>մէզ* միավորի հարադրումով կազմության, որը, սակայն, չունի բաշխական թվականի իմաստը: *Մէզ* միավորը միանում է բացարձակ քանակական թվականին՝ *էրզուս մէզ, իրէք մէզ, չօրս մէզ*. օրինակ՝ Չաղաները գայնէր ին *իրէք մէզ*: Չաղաները նըստէր ին *չօրս մէզ*: Այստեղ *մէզ* մասնիկը կարող էր նշանակել՝ «երեք հոքի մեկ տեղում» կամ «երեքով մեկ տեղում» (№ 303):

Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Վերին Հռոաթաղ գյուղի խոսվածքը բացի բացարձակ թվականի կրկնավոր կազմությունից ունի նաև բաշխականի հետևյալ դրսևորումները. ա. բացարձակ թվականի տրական հոլովով՝ *վէցան*, բ. գրաբարյան անձներական թվականի վերջավորությամբ՝ *վըցէքան* (գրաբար՝ *հնգեքին//հնգեքեան*=հինգն էլ, հինգն էլ միասին, *վեցեքին//վեցեքեան*=վեցն էլ, վեցն էլ միասին)²³, գ. բացարձակ թվականի և *հատ* մասնիկի տրականի հարադրությամբ՝ *վէց հատան*.

ըրկու - էրկու, էրկու հատան, ըրկօքան
իրէք - իրէք, իրէքան, իրէք հատան
չօրս - չօրս, չօրս հատան, չուրսէքան
հէնգ - հէնգ, հէնգան, հէնգ հատան, հընցէքան

վէց - վէց, վէցան, վէց հատան, վըցէքան
տըսը - տասը, տասը հատան, տասան (№ 166):

Փերիայի շրջանի Ղաջան գյուղում բաշխականը կազմվում է նաև բացարձակ քանակականի գործիական հոլովով՝ *էրկըսով, իրէքով, չօրսով* (№ 344):

Ենթադրվում է, որ գործիականով ձևերը կիրառվում են որպես բայական լրացում: Գործիականով բաշխականի կազմության ենթ հանդիպել նաև

²¹ Գ. Հանանյան, Ավեդիայի բարբառը, Խտրբեկի խոսվածքը, Եր., 1995, էջ 94:

²² Տ. Անդրեասյան, Ավեդիայի բարբառը, Երևան, 1967, էջ 77:

²³ Գ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 151:

Խարբերողի հաբուսի գյուղի խոսվածքում՝ *Չաղաները գայներ ին հրեթով* (№303), Խուֆի Տնգետ գյուղի խոսվածքում՝ *Անէկուն յօտով դըվեր ինկ* (№444):

Բիբլիսի նահանգի Խիզանի շրջանի Պոռնենց գյուղում բաշխական թվականը կազմվում է նաև բացարձակ թվականի և տեղ բառի գործիականի հարադրությամբ՝ *երկու տեղով, իրեք տեղով, վեց տեղով, յոթ տեղով, ութ տեղով, տաս տեղով, քրսան տեղով*, որոնք գործածվում են որպես գոյականական լրացում՝ *երկու տեղով խընձօր*: Որպես բայական լրացում կիրառվում է բացարձակ թվականի կրկնության և տեղով բառածիկ հարադրությամբ ձևերը՝ *իրեք - իրեք տեղով կայնէլ, երկու - երկու տեղով նըստէլ* (№ 312):

Ոռոդսթոյի միջբարբառում բաշխականը կազմվում է. ա. բացարձակ թվականի կրկնությամբ՝ *իրեք-իրեք, երգ-երգու*, բ. ական>ագան ածանցով՝ *հինգագան, վեցագան*, գ. բացարձակ թվականի և հատ>հադ միավորի հարադրությամբ՝ *չօրս հադ, հինգ հադ*, դ. բացարձակ թվականի և նույն թվականի գործիականով՝ *չորս-չօրսով, հինգ - հինգով, վեց - վեցով* (№ 192):

Բաշխականի հետաքրքիր կազմություն է դրսևորվում Եդեսիայի Գարմունջ գյուղաքաղաքի խոսվածքում՝ *երգուշար-երգուշար, չուրսար-չուրսար*: Բացարձակ թվականին կցվել է *շար* բառը, որի շ-ն ս-ից հետո ընկել է *չուրսար-չուրսար* ձևում: Նշված ձևերը կարող են գործածվել նաև *հադ* բառի հարադրությամբ՝ *երգուշար-երգուշար հադ, չուրսար-չուրսար հադ* (№ 114):

Ենթադրելի է, որ բաշխականի այս կազմությունը ծագում է *երգու-երգու շարք* կամ *երգու շարք-երգու շարք* ձևերից, որոնք կազմության եղանակով նման են *երկու տեղով* կամ *երկու-երկու տեղով* բաշխականի ձևերին. այսինքն՝ *շարք* և *տեղով* բառերը նույն դերն ու իմաստն ունեն: Հետագայում *երգուշար* ձևում մթազնվել է *շար* արմատի իմաստը, և *երգու-երգու հադ* բաշխականի փոխարեն սկսել է գործածվել *երգուշար-երգուշար հադ* ձևը:

Նոր Ջուղայի բարբառում բաշխականի համար բնորոշ է արաբերեն *ֆի* նախդիրի գործածությունը, որը նշանակում է «ի, մեջ»: Հայերենում այն համարժեք է *մի՛նը* բառին: «Այս արաբ բառը արդի պարսկերենում գործածում է "իրաքանչիւրն ի գին" նշանակութամբ. և այս նշանակութամբ անցել է նաև հայերենին և կարող է կցուիլ ամեն մի թուականի հետ. այսպէս ֆի խինգ թուման "իրաքանչիւրը 5 թուման արժողութեամբ", ֆի վեց ոուրլի, ֆի տասը նաև, ֆի շիշի խմար "իրաքանչիւր շիշի համար"»²⁴:

Ինչպես վերը նշվել է, բարբառներում բացարձակ թվականի կրկնությամբ բաշխականի կազմության մեջ թվերը ենթարկվում են որոշակի փոփոխու-

²⁴ Հր. Աճառյան, Ջննություն Նոր Ջուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 216-217:

թյունների: Մեկ թվականի կրկնությամբ բաշխականը հնչյունափոխվում է *մէ-մէգ, մէ-մէգ* կամ *մէյ-մէյ* ձևերով: Այս հնչյունափոխությունները հիմնականում բնորոշ են Արևմտյան խմբակցության բարբառներին: Երկու թվականի բաշխականի կազմության մեջ տեղի են ունենում հետևյալ հնչյունափոխությունները՝ *երգ - էրգու* (Պոլսի միջբարբառ՝ Նիկոմեդիա (№ 283), Ռոդոսթո (№ 192), Սեբաստիա (№ 458), Սալաթիա (№ 165), Երզնկա (№ 5)), *երգ - էրգուք* (Սեբաստիա - № 81, Խարբերդ - № 6, 28), *էրգու-էրգուք* (Սասուն - № 67, 68), *էյգ-էյգու*²⁵, *ըրկը-երկու, իրկու-երկու, ըրկըվերկու, իրկըվերկու, հըրկըերկու* (Ղարաբաղ - № 49^բ, 53, 127, 164, 166, 226, 389): **Երեք** թվականի բաշխականի հնչյունափոխություններն են՝ *չիրեք - (չ)իրեք, իրեք - իրեհ, իրեյ՝ - իրեք* (Խոյ - № 11, 179, 190, 208, 359,), *իրըք - իրեք, ըրք - իրեք* (Ղարաբաղ - № 219, 226, 389): **Չորս** թվականի բաշխականի հնչյունափոխություններն են՝ *չօս-չօրս* (Ալկն - № 4), *չօշ-չօշ* (Չալմահալ - № 353), *չըրըք-չորեք*²⁶: **Յինգ** թվականի բաշխականի փոփոխություններն են՝ *խինգը - խինգէ* (Վան - № 271), *խիյ - խինգ* (Խոյ - № 179, 365, 11, Վան - № 7), *խիյ-խիյ* (Խոյ - № 364, 382, Վան - № 257, 258, Նախիջևան - № 190, 14, Սիսիան - № 115, Աբովյան - № 161), *հիգ - հիգ* (Խարբերդ - № 213): **Վեց**՝ *վես-վեց, վես - վես* (Խոյ - № 70, 145, Նախիջևան, Ազա - № 14): **Յօթ**՝ *յուտ-յուտը* (Ավեդիա - № 280), *յօթ - յօթ* (Տիգրանակերտ - № 2), *օխտ - օխտ (ը)* (Խոյ - № 359), *օխտըն - օխտը* (Հաղբատ - № 139), *օխտն-օխտը* (Թեղուտ - № 136, Շամուտ - № 137), *ըխտը-օխտը, օխտա-օխտա* (Ղարաբաղ - № 219, 226, 227, 289), *օխդը-նօխդը*²⁷: **Ութ**՝ *ութ - ութ* (Տիգրանակերտ - № 2), *ութ-ութ (ը)* (Խոյ - № 359), *ութա - ութա* (Ղարաբաղ - № 227), *ութնը-ութը*²⁸, **Ինը**՝ *ինը-ին* (Սասուն - № 62), *իննէ - ի՛ննէ* (Տիգրանակերտ - № 2), *իննա-իննա* (Ղարաբաղ - № 227): **Տասը**՝ *դուս-դունը* (Ավեդիա - № 280), *դաւտ - դաւտ* (Տիգրանակերտ - № 2), *տընը - տաւը, տաւա - տաւա, տըսը - տաւսը, տընը - տաւսը* (Ղարաբաղ - № 166, 219, 224, 226, 227, 389): **Քսան**՝ *քսան-սան* (Սուշ - № 183), *քըսըն - քըսան* (Ղարաբաղ - № 24):

Այսպիսով՝ հայերենի բարբառների մեծ մասը բաշխական թվականը կազմում է բացարձակ քանակական թվականի կրկնությամբ: Շատ բարբառներում բաշխականը կազմվում է նաև բացարձակ թվականով, իսկ -ական մասնիկի գործածությունը, ինչպես դիտվեց, սակավ կիրառություն է ունեցել:

²⁵ Հ. Գասպարյան, Հաջընի բարբառը, Եր., 1966, էջ 84:

²⁶ Կ. Ղափթյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային բարոտեզը, Եր., 1966, էջ 126:

²⁷ Հր. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, 1953, էջ 152:

²⁸ Հր. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, 1953, էջ 152: